



4072



**434-Յորեւեսական Տարի - 1935
ԺԵՐԴ Դարսադրա Աստուածաշուշի
ՀԱՅԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԵԱՆ**

«Ճանաչել զիմաստութիւն եւ զիւաս,»
«Խմանալ զբանս հանճարոյ...»

Առակաց Ա. 1




ՊԵՂԲՈՒԹ 1935

23 SEP 2009

22
2-76

— 3 —



Ա. Է Զ Մ Ի Ա. Ծ Ի Ն

Կօմիածինն ի Հօրէ եւ լոյս վատաց ընդ նմա. ձայնն
հնչեցին Սանդառամինք անդնդոց:




ՏՊ. «Վ.Ա.ՀԱԳԻՆ»
Հ. ՅԱԿՈԲԵԱՆ «Ամերիքան Բրէս»

1935

Թէթրակ

— 4 —



ԺՈՐ ԼԵՕՆ

Ա. ՍԱՀԱԿ ՊԱՐԹԵԻ ՀԱՅՐԱՊԵՏ




«Ու յարմատոց հերցի սրբոց մեզ գալուստն ըդխեցեր,»
«զիասակ Սուրբ Խաչոց մատուցման պատճեն է Բաքուս»

64101.67



— 5 —



ԺՈՐ ԼԵՕՆ

Ա. ՄԵՍՐՈՊ ՄՍՇԹՈՑ

«Ու յուղեղեամբ հօմակի լուսոյ վառաց Անեղին նկա-»
«ռազրեցաւ մեզ զիր կենդանի յարգանդ մահուր մեծին»
«Միշտուայ, ամմատոց լուսոյ երկրպագեցուք:»





«Փ Սկզբանի առար Աստուած զերկին եւ զերկիր»
«Եւ երկիր էր ամերենոյ եւ անպատճառ, եւ»
«խաւար ի վերայ անդնդոց եւ հոգի Աստուծոյ»
«ուշէր ի վերայ ջուրց».

«Եւ ասաց Աստուած»

«Եղիցի լոյս եւ եղեւ լոյս»

ԳԻՐՔ ՇՆՆԴՈՑ

* * *

«Երանեալ է այր որ ոչ զնաց ի խորհուրդս ամ»
«պարօտաց, ի նաև ապահովի մեղաւուաց նա ոչ
աելաց եւ յարուս ժամանից ոչ նոսաւ. Այլ յօրէնս
«Տեառն են կամք նորա, եւ յօրէնս նորա խոր»
«հեսցի նա ի տուէ եւ ի զիւերի»:

ՍԱՂՄՈՍ Ա.



Ս. ԳՐՈՅ ՀԱՅԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԵԱՆ 1500 ԱՄԵԱԿԸ

Ս. ԳՐՈՅ ՀԱՅԵՐԷՆ թարգմանութիւնը Ե-րդ. դարու ա-
ռաջին կիսուն կը համարուի ամենահին թարգմանու-
թիւններէն մէկը, յունարէն «Եօթանասնից», ասորերէն
«Պէշիդդո» եւ լատիններէն «Վիւլկադա» թարգմանու-
թեանց հետ.

Հայերէն Ս. Գիրքը նոր դարագլուխ մը բացաւ Հայ
լեզուի և մշակոյթին զարգացման, Հայ ազգային եկե-
ղեցւոյ կազմակերպութեան և նոյն իսկ Հայ ժողովուր-
դի քաղաքական գոյութեան տեսակէաներով։ Հայաստա-
նի գրացի երկու մեծ պետութիւններ Բիւղանդացիք և
Պարսիկներ արդէն 386-ին յ. Ք.-ի Հայաստանը բաժնած
էին իրենց միջև, թէն, Արշակունի վերջին թագաւորներ
գեռ իրենց գոյութիւնը կը պահէին։ Պարսիկները կը փա-
փաքէին ոչ միայն քաղաքականապէս աիրել Հայաստանի,
այլ նաև պարտադրել Հայոց իրենց կրօնը, Զրադաշտա-
կանութիւնը, բոլորովին հեռացնելու համար զանոնք Բիւ-
ղանդացիներէն, որոնք կը բաղձային Հայաստանը կցել

Բիւղանդական կայսրութեան և Հայ եկեղեցին ենթարկել Բիւղանդականին: Երկու պետութիւններն ալ կը ձըգտէին քաղաքական և կրօնական տիրապետութեան և ի հարկին Հայ ժողովուրդի ձուլումին:

Հայոց ներքին կացութիւնը մեծապէս կը յուսադշելը այս պետութիւնները իրենց նպատակներն իրագործելու: Հայաստանի վրայ տիրող Արշակունի թագաւորներու ոյժը հետզհետէ կը տկարանար: Երկիրը բաժնուածէր մեծ ու փոքր շուրջ 400 նախարարութեանց միջեւ, որոնց վրայ թագաւորները անուանական իշխանութիւն միայն ունէին: Արշակ և Պապ թագաւորներուն այս նախարարութիւնները չնշելու կամ արքունիքին կապելու ջանքերը Դ-րդ դարուն անյաջողութեան մատնուեցան և աւելի մղեցին պարսից և բիւղանդացիններուն սահմանակից նախարարները իրենց գոյութիւնը ապահովելու համար, անոնց օգնութեան դիմելու և իրենց թագաւորին դէմ գործելու: Ցեղային գգացումը աւելի զօրաւոր էր քան ազգայինը: Հայերը միացնող իրարու ձուլող հոգը և նոր ազգակ մը անհրաժեշտ էր արտաքին ահեղ վըտանգներու դէմ ազգային միութիւնը պահպանելու համար:

Այս էր կացութիւնը Ե-րդ դարուն սկիզբը, երբ Ս. Սահակ և Ս. Մեսրոպ ժամանակակից իմաստուն և հեռատես Վրամշապուհ Թագաւորի հետ համախորհուրդ մտածեցին: Ս. Գիրքը թարգմանել Հայերէնի, զօրացնել քրիստոնէութիւնը Հայոց մէջ և ստեղծել Հայ ինքնուրոյն ազգային եկեղեցի, որուն շուրջը կարելի պիտի ըլլար հաւաքել Հայ ժողովուրդը: Թէև առաքեալներու ժամանակէն սկսեալ քրիստոնէութիւնը քարոզուեցաւ Հայաստանի մէջ և Տրդատ Թագաւորի և Ս. Գրիգոր Լուս-

սաւորչի օրով Յ02-ին ան դարձաւ պետական կրօն, սակայն մինչև Ե-րդ դարուն սկիզբը Ս. Գիրքը ասորելէն և յունարէն լեզուներով կը կարգացուէր եկեղեցիներու մէջ, որոնք ժողովուրդին բոլորովին անհասկնալի էին և եկեղեցականներու կողմէ բերանացի թարգմանութիւնները քրիստոնէութիւնը ժողովրդականացնելու հանգամանքը չունէին և հեթանոսական սովորութիւնները ու ձևեր կը տիրապետէին շատ մը գաւառներու և իշխանական տուններու մէջ: Նոյն իսկ արքայական հրովարտակներ և դիւնական գրութիւններ յունարէն և պարսկերէն լեզուներով կամ տառերով կը գրուէին:

Ս. Գրոց Հայերէն թարգմանութեան առաջին մեծ դժուարութիւնը Հայ տառերու չգոյութիւնն էր: Ս. Մեսրոպին վիճակուեցաւ Հայ Գրերու Գիւտը 406-ին յ. Ք.: Անմիջապէս ձեռնարկուեցաւ Ս. Գրոց թարգմանութեան նախ մասամբ մը ասորելէնէ Ս. Մեսրոպի ջանքերով: Ապա Ս. Սահակ Կաթողիկոս բերել տոււաւ Եօթանասնից յունարէն թարգմանութեան ընտիր ձեռագիր մը և իր աշակերտներէն Յովհան Եկեղեցացիի, Յովսէփ Պաղնացիի, Եղնիկ Կողբացիի և այլոց հետ ձեռնարկեց Ս. Գրոց ամբողջական թարգմանութեան լեզուական այնպիսի կատարելիութեամբ և իմաստի նրբութեանց այնքան գեղեցիկ, ներդաշնակ և ճոխ արտայայտութեամբ, որ հայացէտ գիտնական մը Լա Քրօգ զայն անուանեց (Թագուհի թարգմանութեանց): Հայերէն զրերու գիւտէն ետքը Ս. Սահակ և Ս. Մեսրոպ բազմաթիւ աշակերտներ զրկեցին այն ատենուան քաղաքակրթութեան մեծագոյն կեղբուները՝ Աղեքսանդրիա, Բիւղանդիոն, Աթէնք, ասոնցմէ Յ1-ը կը կոչուին երէց ու կրտսեր թարգմանիչներ: Ասոնց օգնութեամբն էր որ անոնք կատարելապէս լրացուցին Հին

և Նոր Կտակարաններու թարգմանութիւնը 434-ին, որ
այդ թուականէն սկսեալ ցայժմ կը գործածուի Հայ բո-
լոր եկեղեցիներուն մէջ և հասկնալի է զեռ ժողովուրդի
մեծամասնութեան հակառակ 1500 ամեայ հսութեան:

Մշակութային տեսակէտով Ս. Գրոց թարգմանու-
թիւնը ահազին նշանակութիւն ունեցած է ամբողջ Հայ
կեանքին վրայ: Ս. Գրոց Հայերէն թարգմանութեան լե-
զուն դարձաւ այնուհետեւ դասական Հայերէնի գերա-
գոյն տիպարը: Հին և Նոր - Կտակարաններու պարունա-
կած կրօնական, պատմական, բանաստեղծական, դատա-
կան-օրէնսդիտական, իմաստասիրական ևայլ գրքերու բո-
վանդակութիւնն ու Հայերէն վերծանութեան ճոխ լեզուն
ծնունդ տուին թարգմանչական և ինքնուրոյն հարուստ
գրականութեան մը, որուն ապացոյցն են այն շուրջ
20,000 գրչագրերը, որոնք զեռ պահուած են զանազան
մատենադարաններու մէջ հակառակ զանազան դարերու
մէջ մեր թշնամիներու կողմէ Հայ ձեռագիրները ոչնչացը-
նելու ջանքերուն:

Մինչեւ Զ-րդ դար ծանօթ ամենամեծ օտար եկե-
ղեցական Հայրերու, փիլիսոփաններու և ճարտասաններու
գործերը Հայերէնի վերածուեցան: Այսպէս օր. Եւսերի-
սսի Եկեղ. պատմութիւնն ու ժամանակագրութիւնը, Ա-
թանասի, Բարսղի, Յովհան Ոսկեբերանի, Կիւրեղ Երու-
սաղեմացիի, Եփրեմի և այլն պատմական և կրօնաշունչ
գործերը, և ապա Պղատոնի, Արիստուէլի, Պորփիւրի ևայլն
իմաստասիրական երկերը: Կորիւն, Եղիշէ, Եղնիկ, Ղաղար
Փարպեցի, Դաւիթ Անյաղթ և այլք յօրինեցին պատմա-
կան, կրօնական և իմաստասիրական ինքնուրոյն մեծար-
ժէք գործեր:

Ասոնցմէ կարդ մը կարեւոր օտար յունարէն և ասորերէն

երկերու բնագիրները կորած և Հայերէն թարգմանու-
թիւնները միայն պահուած են: Ս. Սահակ և Ս. Մեսրոպ
և իրենց անմիջական աշակերտները Ս. Գրոց թարգմա-
նութենէն սկսելով այնպիսի հոյակապ թարգմանչական,
ինքնուրոյն և հարուստ գրականութիւն մը ստեղծեցին,
որ իրենց դարը կոչուեցաւ Հայ գրականութեան Ոսկե-
դար:

Հայերէն Ս. Գիրքը Ե-րդ դարէն ի վեր ահազին
ազգեցութիւն ունեցած է հետագայ դարերու Հայ Գրա-
կանութեան և Մշակութին վրայ և ներշնչման անսպառ
աղբիւր դարձած է Հայ գրագէտներու և բանաստեղծնե-
րու համար մինչեւ մեր օրերը: Ան դարձած է նաև լե-
զուական և կրօնա - բարոյական տեսակէտով մեր կըր-
թական հաստատութեանց հիմնական գասագրքերէն մէ-
կը: Ս. Սահակ և Ս. Մեսրոպ քրիստոնէութիւնը Հայոց
մէջ տարածելու և ժողովրդականացնելու համար բազ-
մաթիւ վարժարաններ հիմնեցին Հայաստանի բոլոր գա-
ւառներու մէջ և մասնաւոր կարևորութեամբ քրիստո-
նէական ոգիով դաստիարակեցին ազնուականներու զա-
ւակները:

Իրապէս քրիստոնէութիւնը տարածուեցաւ և արմա-
տացաւ այս գլորոցներուն չնորհիւ: Անկից ի վեր ցայսօր
մեր վանքերն ու եկեղեցիները դարձան կրթութեան և
մշակոյթի կեղըններ Հայոց մէջ: Հայ ճարտարապետու-
թիւնը, հայ քանդակագործութիւնը, հայ նկարչութիւնն
ու մանրանկարչութիւնը, հայ երաժշտութիւնը, հայ լեզուն
և գրականութիւնը մշակուեցան անոնց չնորհիւ: Հայ
եկեղեցին գարձաւ ԱԶԳԱՅԻՆ Եկեղեցի, հայ ժողովուրդի
պատմական, նուիրական յիշատակներու և յիշատակա-
րաններու կեղըն:

Զբաղաշտականութեան դէմ մղուած վարդանանց
պատերազմէն սկսեալ (451) մինչև Մեծ Պատերազմին
(1914-8) Հայոց տուած միլիոնաւոր զոհերուն հոգեբանա-
կան պատճառը պէտք է փնտռել Ս. Սահակի և Ս. Մեսրոպի
ներշնչած այս ոգւոյն մէջ։ Հայ ազգային եկեղեցին գարձաւ այնուհետեւ ազգային դոյութեան հիմնական գոր-
ծոններէն մէկը Ս. Գրոց թարգմանութենէն սկսեալ, Հայոց
կրած քաղաքական բոլոր հալածանքներու և գժրախտու-
թեանց միջոցին։ Ան դարձաւ նաև իսփիւոս աշխարհի
ցըուած Հայութեան միութեան կեղրոնն և ազգապահպա-
նութեան խարիսխը։

Ահա այս է պատճառը որ Ամենայն Հայոց կաթո-
ղիկոսը 1934—5 տարին հոչակեց Ս. Գրոց Հայերէն թարգմանութեան 1500 ամեակի տօնակատարութեան
տարի և այսօրուան տօնը, մէկն է այն հանդիսակատա-
րութիւններէն, զորս կը կատարեն աշխարհի բոլոր Հայ
գաղութները վերարծարծելու համար յիշատակը Ս. Գրոց
թարգմանութեան, որ աննախընթաց պատմական և քա-
ղաքակրթական կարեւորութիւն ունեցաւ Հայոց համար։

ՅՈՒԲԵԼԵՆԱԿԱՆ ՅԱՆՉՆԱԽՈՒՄԲ



ՍՈՒՐԵ ՄԵՍՐՈՊ

ՕՇԱԿԱՆԻ ամենասուրբ գերեզման,
Համարի հող՝ ուրկեց այսօր,
Տասնեւինինք մրրիկեան դարերու,
Պատմորին մը պերճաշու,
Արեւելին Արեւմուս, երկու Հայֆն բովանդակ,
Դեպի գթեզ, ազաօնէն սղօրելու կը շարժէ.

* *

ՕՇԱԿԱՆԻ համարանին հողակոյց,
Եկեղեցւոյ խորանին բոլ անշուխօնէն մրախող
եւ ենովայի պատմախոս մեծ Մատեանին
Դուն սրբազիր բարգմանից,
Ուկեղարու սղամանդեայ բանայի,
Դուն հայ դպրութեանց անշշանակ շուսամուս
Դուն յեզուի կամառ, գեղեցկորեան իջեւան,
Դուն ձեմարան մարմարային մասմասի,
Ներէ՛ որ բու աշակերտը այս սրբեցեալ,
Տասնեւինինք դարեւ յետոյ, զի՞զ պաշտէ...

«Ներբողական»

ՄԻԱՄԱՆԹՈ

S U. T. Գ Ր Ա Բ Ա Ր Ի

Ո՞վ Գրաբար, տուր ինձ միշտ, անոշորիսն ինձի տուր
Սուստորեամբ հանդերձ բու սեղանիդ արգադիր՝
Մեծմայութ, մայխուսն մեր երկրներին տակ մայուր,
Մեր սարերուն վրայ պարող մուսաներուն զերշնիր...

... Գողքնի զինին է ահա՛ վրայադեզ, վարդահուր,
Որ կը հոսի ակադեայ եղջարներէն դարացիր...
Խորենացին՝ է ամբու ու եղիշեն՝ մեղրացուր...
Մինչ Թարգմանից հաց են առրու, խորտիկ ամեն Պատմազիր...:

Ո՞վ դու, կոյզնմեֆ փառայեղ, դուն կը մըխսս տակային՝
Իրեւ կարսայ մը պրդին ուր կ'եռայ միսքն եզնիկին,
Իրեւ շամինուր մ'ուր կ'այրի Նարեկացոյ մեծ հոգին,
Իր խնկաման մ'որուն մէջ սի՞րսն է դպրեւ Շնորհային...

Եւ մուսաները մինչդեռ բոյրովը հոն կ'արքենան՝
Դո՞ւն, ո՞վ մըրերք երթեմ նի մեր սրբորեան, զիստորեան,
Դուն գրաւած ես ահա՛ եկեղեցոյ մեր սեղանն,
Ու թեզ հոնկէ մեզի մի՛շտ կը բաշխէ հայ բահանան...

«ԱՅ»



Այս գրքոյի պատրաստուած է Յորելենական
Յանձնախումբին կողմէ:

ՊԻԵՏՐՈՒԹ.



ԾԱՆՈԹ. — Կողի մանրանկարը Կիպրահայ Տիառ
Առաքել Պատրիկի աշխատութիւնն է:

Յ Ա Յ Տ Ա Գ Ի Բ

ԱՍՏՈՒԱԾԱՅՈՒՆՉԻ ՀԱՅԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԵԱՆ

1500 ԱՄԵՐԻԿԻ

ՅՈՒՆԻԵՆԱԿԱՆ ԶՈՅԳ ՀԱՆԴԵՍՆԵՐՈՒ

Ն Ա. Խ Ա. Գ Ա. Հ Ո Ւ Թ Ն Ա. Մ Բ

S. S. ԲԱԲԴԵՆ Ա. ԱԹՈՂԱՎԿԻՑ ՎԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՄԵԾԻ ՏԱՆԻ ԿԻԼԻԿԻՈՅ

ա) ՆՈՐ ՄԱՐՄԻ Ս. ՔԱՌԱՍՈՒՆ ՄԱՆԿԱՑ ԵԿԵՂԵՑՔԻՆ ՄԷջ
12 ՄԱՅԻՍ 1935 ԺԱՄԸ 4ին ԿԷՍՈՐԷ ՎԵՐՋ

բ) Anglo - American Churchի ՄԷջ Հայ Աւետ. Ա. Եկեղեցւոյ կից
19 ՄԱՅԻՍ 1935 ԿԷՍՈՐԷ ՎԵՐՋ ԺԱՄԸ 4ին

— Հայր Մեր, խառածայն
Յոսաննիայոս

— Բացման խօսք

— Շարական՝ Ուր Զօնորհս

— Ռոկեղարի Խորհուրդը
Բանախոսութիւն

— Սուրբ Սուրբ

— Հայատառ Ս. Գիրքն Հայոց
Բանախոսութիւն

— Ալելուիա՝

— Տեսիլ Ա. Սահակ Պարքեւի՝ Եղիվարդի
Արտասանութիւն

— Ո՞վ Մեծասանչ Գու Լեզու

— Ս. Մեսրոպի Գործին Յաւիտենական Արժեկը
Բանախոսութիւն

— Շարական՝ Ուր Զարդարեցին

— Ս. Դրոգ Հայերէն Թարգմանուրեան
1500 Ամերիկը
Բանախոսութիւն

— Տեր Կեցո՞ւ

— Հայրապետական Օրինուրիւն

Հայ Երաժշտասիրաց Երգչախումբ
Ղեղավարութեամբ Տ. Թ. Խւլքչպետնի

Վեհափառ Տ. Տ. Բարդէն Ա. Կաթողիկոս
Անթիլիալիսի 10 սաներ

Դեր. Տ. Շահէ Արքեպ. Դասպարեան

Հայ Երաժշտասիրաց Երգչախումբ
Վեր. Ենովլք Կէօքէկէօզեան

Հայ Երաժշտասիրաց Երգչախումբ
Պ. Եղիշէ Վարդերէսեան
Անթիլիասի սան

Հայ Երաժշտասիրաց Երգչախումբ
Տ. Եղուարդ Տարօնեան

Անթիլիասի 10 սաներ

||
Տօքթ. Յակոբ Թօփճեան

Հայ Երաժշտասիրաց Երգչախումբ
Ղեհ. Տ. Տ. Բարդէն Ա. Կաթողիկոս